

Ամբաս Բիւրօս
Խմբագրութիւն «Փիիհնիկ»
Ալեքսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵՂԻՊՏՈՍ

Պ.բ. 15
ՏԱՐԵԿՈՒՆ... 15
ՎԵՑՈՄՄՍԵՍՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՈՒԿ Է



Փ Ի Ի Կ Ն Ի Կ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Պ.բ. 15
ՏԱՐԵԿՈՒՆ... 15
ՎԵՑՈՄՄՍԵՍՅ 8

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿՈՒՆ ՐԱՂ. 6



Շ Ա Բ Ա Բ Ա Բ Ե Ր Բ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՁԵՆՌԷՆ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՄԷՎ ՂՐՈՒՇ ՈՂՋ

Բ. ՏԱՐԻ

17 ՕԴՈՍՏՈՍ 1901

ԹԻԻ 12

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ

ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ամեն ժամանակ եւ ամեն ժողովրդի մէջ կը գտնուին միապետական գաղափարներով մարդեր որոնք կը կարծեն իրաւունք ունենալ հասարակութեան գործերը վարելու բացարձակապէս իրենց ուզած եղանակաւ, առանց շատ կամ բնաւ կարեւորութիւն ընծայելու ժողովրդի պահանջներուն, առանց յարգելու ժողովրդի ձայնը: Այդպիսի մարդերու համար ալ զգայիւն օրէնք, Սահ-Նադնարոքիւն, ժողովրդային ընտրութիւն աւելորդ բաներ են. եւ երբ ժամանակի ընթացքին մէջ այդպիսի պայմանաւորումներ մուտ կը գտնեն ժողովրդի վարչական եղանակին մէջ, անոնք զժկամակութեամբ, յակամայից միայն կրնան ինչ որ հաստատուող նոր դրութիւնը եւ, ամեն անգամ երբ կարող ըլլան, չեն վաշտնիչ այդ նոր իրենց համար օտարոտի՝ դրութեան սկզբունքները ոտնակոխ ընելու: — որովհետեւ իրենց ըմբռնումով ազգային օրէնքը իրենց կամքէն

կը բղխի եւ անոր ստորագաս է, Սահ-Նադնարոքիւնը ժողովրդին վրայ իրենց կողմէ դրուած պարտականութիւններու մէջ կը կայանայ. ընտրութիւնը իրենց ձեռքով միայն կրնայ կատարուիլ. եւ ո՞վ է հասարակ, ումիկ, գուհիկ ժողովուրդը որ իրենց պէս բարձր անձնաւորութիւններու ընտրութեան համար բռն տայ. բռնարկութիւնը իրենց արժանապատուութեան կը դպչի, եւ եթէ երբեմն քղեւորութեան կը զիջանին այդպիսիները, այդ զիջումը կամ սկամայ կամ առեւելայթ բան մ'է, եւ ընտրութեան իրենց նպատակը վերջնական ելքին վրայ կատարեալ վստահութիւն գոյացնելէ վե՛րջն է որ ձեռակալեալէս ընտրելու իրաւունքը կը շնորհեն ժողովրդին: Այս դատակարար մարդերը սակայն կրնան իսկապէս բարի մարդեր ալ ըլլալ. կրնան ազգին մեծամեծ բարիքներ ընել, եկեղեցիներ, դպրոցներ, հիւանդանոցներ կառուցանել իրենց սեփական դրամով, կրնան մինչեւ իսկ ազգային քարտեար տնտեսութիւնը շարունակել. զի միապետականութիւնը իրենց բնաւորութեան լաւութեան կամ գէշութեան փորձաքարը չէ, այլ իրենց

սկզբունքն է, սկզբունք մը որ իր հետեւորդները ունի դեռ մենէ շատ աւելի զարգացած ազգերու մէջ անգամ:

Անոնք սակայն որոնք ժողովրդի մը սահմանադրական, ռամկավարական ոգի կ'ընող դասակարգին կը պատկանին, պարտական են ժողովրդի իրաւունքները պաշտպանել ամեն պարագայի մէջ, և առանց նկատողութեան առնելու առաջին դասակարգին պատկանողներուն լաւ կամ վատ մատչելիքը, պարտին զանոնք հարատակեցնել ազգային օրէնքին եւ թոյլ չտալ որ քրմահաճ և միապետական կերպով վարեն ազգային գործերը և իրենց լուծը դնեն ժողովրդի վզին վրայ, թէ իսկ այդ լուծը ըլլայ քաղցր, թէ իսկ իրենք տողորուած ըլլան ժողովրդասէր տրամադրութիւններով:

Միապետական գլուխ կամ ամբարայական յաւակնութիւններ ունեցող անձերը, որոնց տիպարէն Հայեր այս երկրի մէջ ալ կը գտնուին, ըստ ինքեան այնչափ փաստակար չ'են ժողովրդին համար, որչափ փաստակար են այնպիսի անձեր որոնք առերևոյթս ազատամիտ յառաջդիմական, ռամկավարական սկզբունքներ կը դաւանին, որոնք կեղծիքով ժողովրդի իրաւունքներուն պաշտպան կը հանդիսանան, որոնք ազգային օրէնքին տառական գործադրութեանը վերջին աստիճան նախանձախնդիր կը ձևանան. մինչդեռ իրապէս միապետական գաղափարի ներկայացուցիչներուն շահերուն կը ծառայեն և ոգի ի բոլին կաշխատին արդարացրնել անոնց կողմէ օրէնքի դէմ գործուած մէն մի ոտնձգութիւնը: Այսպիսի անձեր շատ դիւրութեամբ կը յաջողին իրաբել ժողովուրդը. վասն զի իրենք թէ և աղաներու արբանեակ երբէք ազայական հովեր չեն առներ, այլ կը մտնեն ժողովրդին մէջ իբրեւ անոր մէկ պարզ անդամը. «Մենք ալ քենէ ենք, կըսեն, դուն իրաւունքներ ունիս, պէտք է պաշտպանես. հապա ի՞նչ ըսել է, Սահմանադրութիւնը քովրդի միայն պարտականութիւններ չդնէր, այլ քեզի կուտայ իրաւունքներ ալ. պէտք է քու կամքը յարգել տաս, քու ձայնը լսելի ընես»: Այսպիսի մեղրահոս յառաջաբանով մը կը

հրապուրեն ժողովուրդը. յետոյ, օգտուելով անոր տգիտութենէն, կսկսին անոր առջև պարզել վէճի տակ եզրը բոլոր խնդիրները բոլորովին իրականութեան հակառակ. ահա այսպիսի իրողութիւններ կը խեղաթիւրեն և ամենախոշոր սուսեր իբրև ճշմարտութիւն կը հաստատեն այնպիսի անպատկառութեամբ որ զիմացինը երբէք չկարենալով երևակայել թէ իր խօսակիցը այն աստիճան փճացած խարբայ մ'է, կըստիպուի հուստալ անոր ըսածներուն: Այսպէսով սեւը ճերմակ կը ցուցնեն և ճերմակը սև: Այդպիսի ճիզվիթ մարդերու պատրաստած թակարգին մէջ գժբազդաբար շատ անգամ կիյնայ միամիտ ժողովուրդը. զի անոնք իրեն չեն յոխարտար աղաներուն պէս, այլ իրեն հաճելի լեզուով կը խօսին թէ և ներքին նպատակներն աղաներուն հետ միևնոյնն է: Ու կը տեսնես որ ժողովուրդը շատ անգամ, այդ խարբալի գործիչներու առաջնորդութեան տակ, անդիտակցաբար ինք իր ձեռքով կը փորէ իր կորուստի փոսը. կը պաշտպանէ ինչ որ պէտք էր կործանել, ու կը հալածէ ինչ որ պէտք էր պաշտպանել: Եթէ հասարակութիւններու մէջ այդպիսի շինծու ազատամիտներ երևան չգային, անոնք շուտով պիտի կարենային իրենք զիրենք ազատագրել ամբարայական ու բռնապետական ամէն լուծերէ: Ուրեմն իրօք այդպիսի կեղծ ժողովրդասէրներ շատ աւելի փաստակար են քան սկզբունքով ու համոզումով միապետական եզրուները որոնցմէ շատեր նոյն իսկ ազնիւ և վեհանձն կ'ընան համարուիլ: Ժողովուրդ մը պէտք չէ այնչափ վախճայ իր սկզբունքի հակառակորդներէն որչափ իր կեղծ բարեկամներէն: Ժողովրդի շահերուն այդպէս խոտորնակի ծառայող կեղծ գործիչները, սիրամարդի փոտուր հագած այդ ազուաները դիմակաղերծ ու փետրաթափ ընելը պարտականութիւն մ'է ժողովրդին իրապէս բարեկամ անձերու:

Տիրար Լևոն Մկրտիչեան, Ժամանակէ մ'ի վեր տեղական և ընդհանուր կարգ մը խնդիրներու մէջ վերև նկա

րագրուածին նման երկրի մի ու ճիզ վիժակն քաղաքականութեան հետեւած և առժամայէս յաջողած ըլլալէն, կերևի, չափազանց քաջալերուած ու շփացած, այս անգամ ալ «Սահմանադրութեան պաշտպանները» վերնագրով «Արշալոյս»ի մէջ երեցած իր համբաւաւոր յօդուածովը ելած է խեղդելու Ալեքսանդրիոյ հասարակութեան մէկ կարևոր մասին կողմէ ի դէպ ժամուրարձրացած օրինաւոր պահանջքի ձայնը՝ ի մասին ազգային Սահմանադրութեան առանց այլ ևս յապաղման Ալեքսանդրիոյ մէջ ալ գործադրութեանը: Սահմանադրութեան «ձրի» պաշտպաններուն դէմ մղած կռուին մէջ թաղ. խորհրդոյ ոյ-ձրի պաշտպանը այնպիսի յայտնի իրողութիւններ յանդգնած է խեղաթիւրել որ կարելի է իրաւամբ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ անունը տալ իր ամբողջ յօդուածին, բաց ի այն մասերէն որոնք պարկեշտ քաղաքացիներու հասցէին ուղղուած ՀԱՅՅՆՈՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ: Արդարև այդ յօդուածով ժողովրդի բարեկամի, օրէնքի բծախնդիր — նախանձախնդիրի դիմակ առած երեսին, այդ ժպտուն դիմակով կուգայ յայտարարել ի լուր հանրութեան թէ՛ Սահմանադրութիւնը բռնաբարուած չէ Ալեքսանդրիոյ մէջ, թէ արդի թաղ. խորհուրդը նոյն այն թաղ. խորհուրդն է որ 1899ին ժողովրդի քուէով ընտրուեցաւ, հետեւաբար հակասահմանադրական չէ անոր կազմութիւնը, և թէ Սահմանադրութեան գործադրութիւնը պահանջողները խաբերաներ ու եսասէրներ են...

«Փիւնիկ»ի նախորդ շաբթուան Յաւելուածը թէեւ ջախջախիչ փաստերով հերքեց Տիար Մկրտիչեանի հաստատութիւնները, նկատի առնելով խնդրոյն կարևորութիւնը՝ աւելորդ չեմ համարիր զանոնք անգամ մ'ալ մի առ մի քննութեան առնել և բազդ ստել բուն իրողութիւններուն հետ, որպէս զի «եղելութեան մօտէն անտեղեակ անձեր չըլլայ թէ յափշտակուին» թաղական խորհրդոյ Դիւանապետ — պաշտպանին «ոգևորութենէն և անոր իրարանցումը վերագրեն օրինական նախանձախնդրութեան

մը» . — որպէս զի ամէն ոք հասկընայ թէ Տիար Լևոն Մկրտիչեան ինչպէս կը գրէ Պատմութիւնը...

Տիար Մկրտիչեան վստահօրէն հաւատելէ վերջ թէ՛ «թեթեւ քրննութիւն մը բաւական է հիմէն խախտելու դժգոհներու յարուցած օրինական միակ առարկութիւնը» — որ կը վերաբերի արդի թաղ. խորհրդին հակասահմանադրական կազմութեանը —, երկու քառով կը պատմէ կը ըմբոյնէ 1899 Ապրիլի վերջերը ժողովրդային քուէարկութեամբ ընտրուած թաղական խորհուրդին անդամներուն հրատարման պարագաները: Համառօտութիւնը իրեն պիտի ներէինք, եթէ մտքերը մոլորեցնելու և իրողութիւններ խեղաթիւրելու իբրև միջոց մը գործածուած չըլլար այն:

Դիտենք թէ թաղ. խորհրդոյ անդամներն էին.

- Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար,
 - » Մի.բայէլ պէյ Բէրզեան,
 - Տիար Արմենակ Կամսարական,
 - » Գրիգոր Մեկքոնեան,
 - » Պերճ Օհանեան,
 - » Գէորգ Իփէքեան,
 - և » Ալեքսան Ճէվահիրճեան:
- Ըստ Տիար Մկրտիչեանի, 1899

Դեկտեմբերի վերջերը թաղ. խորհրդոյ Փոխ-Ատենապետը՝ Տիար Արմենակ Կամսարական կը հրատարի թէ՛ իր և թէ պաշտօնակիցներուն օրէնքի և դատական խնդիրներու անտեղեակ ըլլալուն պատճառաւ, ըստ որում այդ միջոցին խորհրդին մէջ օրէնսգէտ անձեր գտնուելու պէտք կըզգացուի եղեր. (1) Պրն. Մկրտիչեան հապճեպով կաւեւցնէ. «Նոյն նկատումներով միւս անդամներն ալ հրատարական կուտան, ինչպէս կերևայ պաշտօնական արձանագրութենէն որոյ ներքև ստորագրած են խորհրդոյ բոլոր անդամները:» Ընթերցողը անշուշտ այն տպաւորութեան տակ կը մնայ որ, գեղեցիկ օր մը Տիար Ա. Կամսարական, օրինական և դատական խնդիրներու անձեռն

(1) Շա's շառ. ակնարկուած դասական խնդիրներէն ո'րև արդեօք փախագուած ելլն ունեցած է, շնորհիւ օրհնագիտ և որ քաղականներու...:

հասութեանը համար խղճահարուած կելլէ յանկաշտ հրատարական կուտայ և Խորհրդի միւս անդամներն ալ նոյն խղճահարութեամբ, կա՛հ, եթէ կուզէք, Բանիւշիչն ոչխարներուն պէս իրենց պետին հետեւելով, ամէնքը մէկէն, նոյն օրը և նոյն ժամուն, ինքնաշարժ հրատարական կուտան։ Ներկայացման երկրորդ տեսարանն ալ նոյնչափ մոդական է. երկրորդ տեսարանն կըսեմ և ոչ երկրորդ արարուած, վասն զի Տիար Մկրտիչեան ոչ թէ վարագոյրի գոցուիլ բացուելուն, այլ ակնթարթի մ'անգամ ժամանակ չը թողլով կը փութայ աւելցնել. « ԱՅՆ ԱՏԵՆ Ատենապետ փաշան հետեւալ կարգադրութիւնը կը խորհի ». ա՛յո, կայծակի արագութեամբ կը խորհի, կառաջարկէ, կը գործադրէ. և ահա Տազնապն անցած է, Թաղական Խորհուրդը վերակազմուած է։ Մովսէս անգամ այսչափ վսեմ չէ արարչագործութեան պատմութեան մէջ. Ի սկզբանէ էր երկիր աներեւոյթ եւ անպատրաստ... Ասաց Ասուած. եղիցի յոյս, եւ եղեւ յոյս։

Իրողութիւնները մէկիկ մէկիկ երբ քննենք, պիտի համազուինք թէ խնդիրներու վրայէն Տիար Մկրտիչեանի այդ դահալէժ վազքը ուրիշ բան չնշանակեր բայց միայն փախուստ մը ճշմարտութենէն, որուն լոյսը կրնայ իր աչքերը ծակծկել։ Յաւուրին այն է որ կը ջանայ խաւարի մէջ քաշքշել ընթերցողներն ալ որոնք իրեն պէս ճշմարտութենէն վախնալու պատճառ մը չունին։

Ուրեմն նախ քննենք հրատարականներու խնդիրը։

Թաղական խորհուրդը իր անդամներու ամբողջութեամբ (բաց ի վսեմ. Պօղոս փաշայէն որ Եւրոպա դացած էր) կը պաշտօնավարէ մինչև 1899 Գեկանեմբերի սկիզբը. միայն Փոխ — Ատենապետ Տիար Արմենակ Կամսարական քանի մ'անգամ հրատարականի խնդիր կը յարուցանէ, բայց ամէն անգամին պաշտօնակիցները իր հրատարականը չընդունելով միջադէպը կը փակուի։ Հրատարականներու տազնապէն առաջ ու վերջը տեղի ունեցած կարգ մը դէպքերուն ու դարձուածքներուն բուն շարժառիթները երբ կը փնտռենք, կա-

րենք է յիշել երկու դէպքեր որոնք Խորհրդի անդամներուն միջև անհամաձայնութեան և հակառակութեան մէջ մէկ զօրաւոր պատճառ դարձան. այդ դէպքերն են Միքիմկիլը և « 2'յիշի » ի խնդիրը։ Լահէի Համաժողովին առթիւ եկեղեցւոյ մէջ գումարուած միքիմկիլի Տիար Ալեքսան ձեւակերտեանի մասնակցութիւնը իր պաշտօնակիցներուն կողմէն իբրև աններելի յանցանք դատապարտուեցաւ. նոյն պէս « 2'յիշի » ի խնդիրն մէջ Ալեքսանդրիոյ Թաղ. Խորհրդին Գահիրէի աղագլին իշխանութիւններէն տարբեր, այսինքն չէզոք ու թոյլատրող դիրք մը բռնելը արդիւնք էր Խորհուրդին անդամներէն ոմանց խոհեմութեանը. բայց ամէնքը համակարծիք չէին ու մասնաւորապէս ոմանց ջղերուն դրպած էր ժողովրդային հոսանքին առջև տեղի տուած ըլլալու երևոյթը։ Այս երկու խնդիրները, մասնաւորապէս քառակիսի վէճերու նիւթ եղած էին Խորհրդին մէջ և խուլ հակառակութիւն մը արդէն սկսած էր անդամներու մէջ՝ այդ վէճերու երեսէն։

Այդ միջոցին էր որ վսեմ. Պօղոս փաշան Եւրոպայէ կը վերադառնար և յիշաւ, կամ յանիրաւի, Խորհրդին անդամները այնպէս կը կարծէին թէ վսեմ. փաշան վերոյիշեալ երկու խնդիրներու առթիւ Թաղական խորհրդի բռնած դիրքը պիտի պախարակէր. ամէն մէկը կը մտածէր պատասխանատուութիւնները իր վզէն թօթուել. ոմանք ալ կը խորհէին բողոքողի դիրք ստանալով « յանցանք » մէկ երկու անգամի վրայ ձրգել և այսպէսով վրէժ լուծել իրենց հակառակորդներէն...։

Հոգեբանական այդպիսի վաշտկեանի մը մէջ էր որ, ճիշդ վսեմ. Ատենապետ փաշային Եւրոպայէ վերադարձի օրերուն, հրատարական կուտար Տիար Արմենակ Կամսարական, բայց ո՛չ թէ Տիար Մկրտիչեանի ըսածին պէս իր և պաշտօնակիցներուն օրէնսդէտ չըլլալը պատճառ բերելով, այլ, ինչպէս Խորհրդին զանազան անդամներէն ժամանակին լսած եմ, պարզապէս անձնական զբաղումներուն շատութեանը և առողջական վիճակին պատճառով։

Վերջապէս Վսեմ. Պօղոս Փաշայի նախագահութեամբ անդի կունենայ այն նիստը որ 1899 ին ժողովրդային քուէսը ընտրուած Թաղական խորհրդին վերջին նիստը եղաւ : Հրատարակալ Տիար Ս. Կամսարական ալ ներկայ կը գտնուի Վսեմ. Փաշային հրատարակութեամբը. բացակայ է միայն Միքայէլ Պէյ Բէյընը : Աստուծոյ փառանքով ժողովին կողմէ կոչուած կրնէ Տիար Կամսարականի ազգասիրական զգացումներուն և կը ինդրէ որ գէթ ժամանակ մ'ալ շարունակէ իր պաշտօնը, միանգամայն կիմացնէ թէ Բէյընին Վսեմ. Միքայէլ Պէյն ալ իրեն յայտարարած է թէ ինքն ալ պիտի հրատարակէր Տիար Կամսարական ետ չառնէ իր հրատարականը : Բայց ի դուրս Տիար Կամսարական կը մնայ անգրգուշի, միշտ իր գործերուն շատութիւնը պատճառ բերելով : Այն ատեն Վսեմ. Ատենապետ Փաշան յաւ կը յայտնէ թէ Խորհրդին ճիշդ ամենէն կարեւոր անդամներն են (Միքայէլ Պէյ Բէյընին և Տիար Արմենակ Կամսարական) որ կը հրատարին. — ինք ամենէն աւելի անոնց վրայ համարուած և վստահութիւն ունէր. . . : Սոյն վերաւորիչ ակնարկութեան վրայ Տիար Գ. Իփէքեան ալ կուտայ իր հրատարականը : Կերևի թէ Վսեմ. Փաշային ուզածն ալ այդ էր. անմիջապէս սուրի կելլայ. «Ահա հրատարական մ'ալ. ուրեմն Թաղ. Խորհուրդը ԼՈՒՄՈՒՄԵ Է». — կրտէ : Թաղ. Խորհրդի մնացեալ անդամները փաշայական այս պատգամին առջև խոնարհելով մի առ մի կուտան իրենց հրատարականը, վերջինները ըլլալով Տիար Գերծ Օջանեան և Ալեքսան Ժէվահիրեան և ամենքը միասնայնորէալ յոժուած կը հռչակեն Թաղ. Խորհուրդը : Վսեմ. Ատենապետ Փաշան կը յայտարարէ թէ ինքիւրեն կը վերապահէ նոր Թաղական խորհուրդ մը կալլել իր յարմար դասած եղանակով : Հրատարական անդամները խորհրդին յոժուած ըզրալը կը հաստատեն իրենց ստորագրութեամբ պաշտօնական արձանագրութեան մը մէջ, որուն հրատարակութիւնը խիտ կարեւոր է ներկայ պարագային, ըստ որում վէճի ենթարկուած իրողութիւններուն վրայ կրնայ լոյս սփռել : Արդեօք պատ. Թաղական խորհուրդը չի՞ թոյլատ-

րեր իր պաշտօնին — Իլանապետին որ հրատարակութեան տայ այդ արձանագրութիւնը իր պաշտօնաթերթ «Արշալոյս» ին մէջ :

Ինչպէս տեսնուի, Տիար Մկրտիչեան իր պատմութեան մէջ Խորհուրդին յոժուածին խօսքը անգամ չընկեր. այլ անգամներու հրատարակելու յայտնելէն անմիջապէս վերջը կը կցէ. «Այն ատեն Ատենապետ փաշան հետեւեալ կարգադրութիւնը կը խորհի» ևն : Հոս ալ ընթերցողը «այն ատեն» խօսքէն կրտարուի հետեւցնել թէ այդ կարգադրութիւնը ըստած բանը նոյն այդ վայրկենին անգի կունենայ, հրատարականներէն անմիջապէս վերջ, Թաղական Խորհրդի անգամները ժողովաւարահէն դեռ չմեկնած : Մինչդեռ բոլորովին հակառակն է իրողութիւնը : Ժողովականները կը յրախ, անոնցմէ իւրաքանչիւրը առանց վերապահութեան կը յայտարարէ իր ծանօթութիւնը Թաղական Խորհրդի լուծուած, ամբողջ ժողովուրդը կիմանայ եղելութիւնը. վերջապէս ամէն ոք ազատօրէն կրկնի իր կարծիքը յայտնել նոյն օրուան պէտական հարուածին վրայ :

Անկէ քանի մ'օր վերջն է որ Վսեմ. Ատենապետ Փաշան կրնէ նոր «կարգադրութիւնը» :

Բայց խօսքը դարձեալ տանք Պարոն Մկրտիչեանին .

— «Հրատարակել անգամներէն երկուքին տեղ իւրեւ օժանդակ անգամ կառաջարկէ Վսեմ. Կարապետ և Արթին Բէյընին Պէյերը իսկ միւս հրատարակել անգամներէն ալ կը ինդրէ որ հրատարականին ետ առնեն Արդի քաղական խորհուրդը նոր մարմին մը չի, հասարակ 1899 ին Սահմանադրութեան ընտրուած մարմինը, որու հրատարակել փոքրահասակութեան տեղ երկու օժանդակ անգամներ առնուած են» : —

Հիմա նոյն պատմութիւնը մենք պատմենք :

1899 ին ընտրուած Թաղական Խորհուրդը վերջնականապէս լուծուելէն քանի մ'օր վերջը, Վսեմ. Պօղոս Փաշան «Օթէլ Խորհրդի» մէջ գաղտնի խորհրդակցութեան կը հրաւիրէ իր ուրած խումբ մը անձերը : Գաղտնի խորհրդակցութեան կը սկսուի, որովհետեւ եթէ Թաղ. Խորհուրդը վերջ-

նակահապէս լուծուած չըլլար, եւ յայտնի ու պաշտօնական գումարում մը ըլլար այդ, անշուշտ թաղ. Խորհրդարանի մէջ տեղի պիտի ունենար և ոչ թէ օթէլի մը առանձնասենեակին մէջ: Նոյնպէս իր ուղած խուճը մը անձերը կըսեմ, որովհետև եթէ թաղ. Խորհուրդը լուծուած չըլլար եւ անոր անդամները ըլլային հոն հրաւիրուածները՝ իրենց թիւին մէջ անհրաժեշտաբար պիտի գտնուէին նաև Վսեմ. Միքայէլ պէյ Րէիզեան և Տիարք Գէորգ Իփէքեան և Ալեքսան Ճէվահիրճեան, մինչդեռ անոնցմէ և ո՛չ մէկը ներկայ եղած է, սա գերագոյն պատճառով որ չեն հրաւիրուած. . . ընդհակառակը ներկայ եղած են հրաժարեալ թաղ. Խորհրդին անդամ չեղող անձնաւորութիւններ ալ՝ որոնք Վսեմ. Պօղոս Փաշային նոր կողմէ յարմար գատուած էին թաղ. Խորհրդին անդամ կարգուելու: Տիար Ալեքսան Ճէվահիրճեան, կերևի, շնորհքէ ինկած էր վերև յիշուած քաղաքական պատճառներով. Տիար Գէորգ Իփէքեանի ալ չհրաւիրուելուն պատճառը ինքնին հասկանալի է թաղ. Խորհրդի լուծման պատմութեան ուշագրաւ է որ ներկաներուն մէջ եղած է անդառնալի կերպով հրաժարած Տիար Ա. Կամսարական, որը այս անգամ Փաշային մէկ խօսքովը կընդունի նոր եւ առժամանակ թաղ. Խորհրդին անդամակցութիւնը:

Այս կերպով ահա ժողովրդին կողմէ ընտրուած թաղ. Խորհրդին յայտնողած է Փաշայնտիր թաղական Խորհուրդ մը:

Նախկին թաղ. Խորհրդին անդամներէն ոմանց, թէ իսկ մեծամասնութեան, նորին մէջ առնուիլը բնաւ փաստ մը չէ՝ թէ նորը հինին շարունակութիւնն է. զի այդ բոլորովին պատահական բան մ'է. — այնպէս պատահեց է որ նախկին թաղ. Խորհուրդին անդամներուն մէկ մասը Վսեմ. Փաշային համակրութեան արժանացած անձնաւորութիւններ են եղեր:

Եթէ նորը հինին շարունակութիւնն էր, ինչո՞ւ գէթ Տիար Ա. Ճէվահիրճեան ալ չէր կանչուեր իր պաշտօնը շարունակելու, քանի որ անիկա ամենէն վերջը հրաժարական տուած էր, այն ալ մի միայն Խորհրդին լուծուած հըն-

չակուելուն հետևանքովը:

Այդ երկու հապէս իրարմէ տարբեր (մին բռնով ընտրուած, միւսը փաշայնտիր) թաղ. Խորհուրդները իբր մէկ մարմին, իբր մէկը միւսին անմիջական շարունակութիւնը ներկայացընելու համար չէ թէ Պրն. Մկրտիչեանի վրան բաց սուտերը, այլ ամենէն ճարտար հնակարկատներու կարկտանքն անդամ անբաւականն:

Նաև պէտք է խոստովանիլ թէ Վսեմ. Փաշան իր ամիրայական ուրիշ յատկութիւններուն հետ մէկտեղ ունի վեհանձնութիւն մը, որով չէ ուղած, թաղ. Խորհուրդի այսօրուան անճարակ պաշտպանին պէս, խարդաւանել, ժողովրդին տարբեր գոյներով ներկայացընել իր ըրած նոր կարգադրութիւնը: Աւտի, ո և է շիթութեան տեղի չը տալու համար, նորակազմ մարմինը «Ա.Թ.Ս.Մ.Ս.Յ» թաղ. Խորհուրդ նոր անունով մկրտած է: Կը հարցընեմ. եթէ նոր մարմին մը չէր այն, եթէ նախորդին շարունակութիւնն էր, ինչո՞ւ այս անունան փոփոխութիւնը: Նոյն վեհանձնութեամբ կառարուած իրողութիւնը իր ստորագրութեան տակ բացէ ի բաց կը խոստովանի նաև նորընտիր թաղ. Խորհրդի Վսեմ. Փոխ-Ատենապետ Պէյը՝ 921 Յունուար 1900 թուով և Պրն. Մկրտիչեանի շարադրութեանը ու ձեռագրով պաշտօնագրին մէջ, որը իր ջախջախիչ կարևորութեանը համար կարտագրեմ անցեալ շաբթուան «Փիւնիկի Յաւելուածէն»: Ահա այդ պաշտօնագրին կարեւորագոյն տողերը.

«Տեղւոյս հայ հասարակութեան ՄՇՏԱ.ԿԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ Վսեմ. Պօղոս Փաշայի կողմէ կարգուած թաղ. Խորհուրդն ա՛նկ յիստօր իրաւունք կը վաշեցէ նորին Վսեմապետ կողմէ ինքզինքը յարգելի ընծայելու համար, և ի՞նչ Ա.Թ.Ս.Մ.Ս.Յ հանգամանքը ո և է կերպով արգելք չհանդիսանար հանրային գործերը զօրաւոր ձեռքով մը վարելու»:

Կը տեսնէք որ Պրն. Մկրտիչեան, (Plus royaliste que le roi) կուրանայ ինչ որ թաղ. Խորհրդի Ատենապետը և Փոխ-Ատենապետը բացէ ի բաց կը յայտարարեն:

Ու հիմա, ընթերցո՛ղ, եթէ կրնա՛ս կարդա՛ առանց ծիծաղելու Պրն. Մկրտիչեանի հետևեալ տողերը.

«Այս գործուղութեան ո՞ր կէտը արդեօք հակասահմանադրական է... : Աղմկայոյց խմբակը այն ժամանակ միայն — դոնէ ձեին մէջ — իրաւունք ունեցած կըլլար, երբ Թաղ. Խորհրդի արդի անդամներէն եւ ոչ մին կա՛մ լոկ անոնց խիստ աննշան փոքրամասնութիւնը միայն ժողովուրդին քուէովը ընտրուած ըլլար, ու մեծաւաստութիւնը անձի մը կա եւ չափաւորեալ արդի պաշտօնի կոչուած: Ասանկ քան քարեքաշդարար գոյութիւն չունի (!!!): Արդի Թաղ. Խորհուրդը նոր մարմին մը չէ, հապա 1899 ին Սահմանադրութեան ընտրուած մարմինը,» եւն, եւն:

Պրն. Մկրտիչեան իր ստալոյց պատմութիւնը կը վերջացնէ հետեւեալ յազմական բառերով. «Այսպէս ահա Ատենապետ Փաշան կը յաջողի Տազնապի մը առաջին աննը»:

Այս տազնապ բառին մէջ պահուած կերակայ խորհրդաւոր մտատանջութիւն մը, որը սակայն կրնայ քիչ մը աւելի հասկանալի դառնալ, երբ այդ նախագատութեան մօտեցնենք Պրն. Մկրտիչեանի պերճախօս վերջաբանին վերջին պարբերութիւնը, որը ուղղուած է Սահմանադրութեան գործադրութիւնը պահանջող հանրագրին տակէ 210 ստորագրութեանց տէրերուն. «ինչո՞ւ կուզէք ընտրական ֆուստիւնը մէջ փնտռել ձեր փառասիրութեան և եւսամուղութեան յագուրդը»: Կը տեսնէք, ուշիմ ընթերցողներ, ամէն անգամ երբ ժողովրդային ընտրութեան հարկը կը ծագի, Պ. Մկրտիչեան և իր պաշտպանութեան պէտքը զգացողները Տազնապ մը կը նկատեն զայն. . . : Կը տեսնէ՞ք, անոնք ընտրական «ֆուստիւնը» կը սարսափին ու կը նախընտրեն փաշայական ֆուստիւնը. . . : Այն ո՞ր կը մնայ Սահմանադրութիւնը, որը սակայն դեռ կը պնդեն թէ Ազգ. քսանդրիոյ մէջ տառական կերպով գործադրուած է. . . :

Ասկէ վերջ կուգան Պ. Մկրտիչեանի ոչիմպական շանթերը եւ պատգամները:

«Հետեւաբար Սահմանադրութեան 56րդ յօդուածի տրամադրութեան համաձայն Թաղ. Խորհուրդը իրաւունք ունի իր պաշտօնը մինչև 1903 ամբողջ

Մայիսի սկիզբը շարունակելու: Ո՛չ մէկ ազգային օրէնք կը պարտաւորէ զանկայդ թուականէն առաջ հրատարակելու ի Խորհուրդին ազատ կամօք»:

Թողլով արդի Թաղական Խորհուրդի հակասահմանադրական կազմութիւնը, անոր փաշայընտիր հանգամանքը, որը լիւրջի ապացուցուցաւ այս էջերուս մէջ, — եթէ նոյն իսկ սահմանադրութեան ընտրուած օրինաւոր Թաղ. Խորհուրդ մը ըլլար այն, նորէն չպիտի կարողանար անոր պաշտպան կանգնողը այսչափ բացորոշ պատգամ մը որոտալ ժողովրդի երեսին: Հայ ժողովրդի ուսման վարական ուղիին ծնունդն է Սահմանադրութիւնը. այդ Սահմանադրութիւնը ճանչցած է ժողովրդի կամքին գերակշռութիւնը:

Պատրիարքներ անգամ, որոնք ազգին գերագոյն վարիչներն են, ժողովրդի կամքին ստորագատեալ են. եթէ ժողովուրդը դժգոհ է անոնցմէ, կարո՞ղ է զանոնք հրատարակել: Նոյնպէս եթէ ժողովուրդը դժգոհ է իր Թաղական Խորհուրդէն, թէ իսկ իր ընտրածն ըլլայ, (ներկայ պարագայիս իր ընտրածն ալ չէ այն) կրնայ և իրաւունք ունի պաշտօնավարութեան պայմանաժամը չլրացած անոր հրատարականը պահանջել: Ասոր ալ օրինակները տեսնուած են շատ ու շատ անգամներ: Ինչո՞ւ ուրեմն մեր սահմանադրութեան պարտնը կը մտնայ թէ «Խորհրդին ազատ կամօք» քով երբեմն ժողովրդին կամօքն ալ գեր մը ունի. . . . :

Իկատատաներու յոռեղոյն տեսակն անգամ այդպիսի յաւակնոտ պատգամ մը չպիտի արձակէր: «Ինչպէս իր կազմութեանը նոյնպէս իր հոգիով իրապէս ժողովրդապետ ու սահմանադրական» Թաղական Խորհուրդը սխալած է ուրեմն իր գատին պաշտպանութիւնը յանձնելով այսպիսի ձախող փաստաբանի մը, որ իր որոշողութեամբ պատգամներովը և ժողովրդի հասցէին թափած լուտանքներովը իր պաշտպանած Թաղական Խորհուրդը վարկաբեկ և ատելի դարձնելու լաւ գործիք մը կը դառնայ և որ իր խոշոր հակատութիւններովը և վիթխարի սուտերովը հաստատել ուղղա՞ծ կը հերքէ ու հերքել ուղղա՞ծ կը հաստատէ:

«Գտնեցողը դարձաւ այս իմաստակ իմաստասէրներուն սկարամու-

Թեան ամէնէն սրտիչ յատկանիչներէն մին ալ ամէն ինչ Առաջնորդին վրայ ձգելուն մէջ կը կայանայ : Այս կերպով միամտօրէն կուրանան իրենց ինքնութիւնը, արժանապատուութիւնը և մտաւոր ու բարոյական բոլոր կարողութիւնները » :

Կը տեսնէ՞ք, դաւաճական իշխանութեան նախագահին գիտելու պարզ և օրինական միջոցն ալ՝ որ Հանրապետութիւններու մէջ անպատճառ քնակաճ հաճարուած և հաստատուած գրութիւն մ'է, ծաղրելի կը հռչակուի մեր Տիար Մկրտիչեանէն : Տիար Մկրտիչեան իր « Աղմկայոյց » կոչած « խմբակը » մեզի անհասկանալի տրամաբանութեամբ մը կը մեղադրէ թէ ինչո՞ւ աղմկայոյց չէ եղած, թէ ինչո՞ւ դիտցած է սպասողական դիրք բռնել մինչև Սրբազան Առաջնորդին գալը, թէ ինչո՞ւ յախուռն և դահավէժ միջոցներու չէ դիմած, ու թէ ինչո՞ւ հիմա ալ միայն Սրբազան Առաջնորդին դիմելով բաւականացեր է :

... բայց թող շատ անհամբեր չըլլայ Տիար Մկրտիչեան. տեղական գործերուն սահմանադրական ուղղութիւն մը սորուելուն բազմացողները խռովարարներ ու խառնակիչներ չեն որ օրինական խաղաղ միջոցները բռնորովին չըստառած իր լուելեայն թեւադրած բուն միջոցներուն դիմէին : Բայց երբ խաղաղ և օրինական միջոցները սպառին, դուցէ այն ատեն Սահմանադրութեան գործադրութիւնը պահանջողները Տիար Մկրտիչեանի « յեղափոխական » թեւագրութիւնը նկատողութեան առնեն « իրենց ինքնութիւնը, արժանապատուութիւնը և մտաւոր ու բարոյական բոլոր կարողութիւնները ուրացած չըլլալին » հաստատելու համար : Մենք չենք փափաքիր որ իրերը այդ փիճակին հասնին. բայց կերևի Տիար Մկրտիչեան ատոր փափաքելու պատճառներ ունի... այլապէս ինքնիրեն չպիտի թոյլատրէր Թաղական Խորհուրդին և Ժողովուրդին մէջտեղ agent provocateurի գեր կատարել :

Ու մինչ ամենուն յայտնի է թէ Սահմանադրութեան գործադրութեամբ կարգ ու կանոն կը հաստատուի տեղական ազգային գործերուն մէջ ու կա-

մայականութիւններու շնորհիւ բերպաւախութիւնները կը դադրին, ժողովուրդը կը հանգարտի ու կը խաղաղի, Տիար Մկրտիչեան, իրերու արգի խառնաշփոթ գրութեան շարունակութեանը դուցէ ամենէն աւելի բաշխացողը, կը յանդգնի այդ գերազանցազէս օր'նա՞նէր ու խաղաղարար պահանջը ներկայացողներուն երեսն ի վեր պուռալ : « Պարաններ, ձեր նպատակը Սահմանադրութիւնը գործադրել չէ, այլ հաստատելութիւնը խաբելով ու գրգռելով պղտոր շուրի մէջ ձուկ որսալ » . . . Եւ աւելի ծիծաղելին, բայց մանաւանդ ցաւալին այն է որ, ո՛չ թէ իր կողմէն միայն կը խօսի, այլ կը յաւակնի խօսիլ Թաղական Խորհուրդի, Առաջնորդի ու Ժողովրդի անունով : Սպասելով որ Թաղական և Առաջնորդ կ'մ' յայտարարեն թէ իրօք Տիար Մկրտիչեան իրենց կէս պաշտօնական բերանն է և կ'մ' ինչակալ ինքն անոր բերնին, առ այժմ՝ կարծեմ՝ այս յօդուածով բաւական ապացուցի անաչառ ինքնբերողներուն թէ Ժողովուրդը բուն խաբողը, գրգռողը, անոր քթին խնդացողը ո՛վ է. կիրքերու հանդարտացումէն վախցող ու պարբերաբար զանոնք հրահրելու միջոցներ գտնող ու գործադրողը ո՛վ է. որով դիւրաւ կրնայ ամէն ոք նաև հետևյալ թէ պիտո՞ր ջուրի մէջ ձուկ որսացողը և այդ արուեստին մէջ արդէն համբաւ ստացողը Աղէքսանդրիոյ մէջ ո՛վ է :

Ժամանակն է ուրեմն որ Ժողովուրդը զոչուչանայ ու չխաբուի թեւագրութիւններէն ու սազրանքներէն անձի մը որ իր Դպիրի պաշտօնին միացուցած է Փարիսէլցիի գերբ, ճիզուրական և մաքիսայէլեան վերջին կատարելագործութիւններով :

ՄԻՉԲԱՆ ՏԱՄԱՏԱՆ

Ադեֆս. 15 Օգոս. 1901

Օրուան հրատարակուող հարցն ընդգրկող Լեռիայ ընդարձակ յօդուածը, զոր խնդրաբար պետևս դիպած է բարեհաւքաւ սզգային գործիչ ու հայրենի բանասէտ Տիար Միհրան Տաւաճեան, կը հարկադրէ զվեզ այս օրուան թիւն զուրս ձգել տեղական ու քաղաքական շարժումը բաժնեկերք : Այս բացառիկ ու ակաւայ զակցաւորեան հաւար կը խնդրեմք մեր Պատ. ընկերցողաց Լեռնոյս Լեռնաբնակ :